

ԵՐՏՈՂԱՆ, ՄԵՐՔԵԼ ԵՒ ԵՐՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴԻ ՆԱԽԱԳԱՅԸ ԸՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻՋԵՐԿՐԱՎԱՅԻՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան 22 սեպտեմբերին բանակցած է Գերմանիոյ վարչապետ Անկետա Մերքելի եւ Եւրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշելի հետ։ «Ամատողու» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ եռակողմ հանդիպումը տեղի ունեցած է տեսաժողովի ձեւաչափով։

Հանդիպումի ընթացքին կողմերը քննարկած են Միջերկրական ծովու արեւելքին մէջ տիրող իրավիճակն ու Թուրքիա-Եւրոպական Միութիւն յարաբերութիւնները։ Բանակցութիւններու ընթացքին ընդգծուած է Աթէնքի եւ Անկարայի պատրաստակամութիւնը արեւելեան Միջերկրականի մէջ գոյութիւն ունեցող լարուածութեան նուազեցման ուղղուած նախնական բանակցութիւններու սկսելու վերաբերեալ։

Թուրքիոյ նախագահը յոյս յայտնած է, որ արեւելեան Միջերկրականի շրջանային խորհրդածողովը, որուն պիտի մասնակցին բոլոր կողմերը, ներառեալ՝ կիպրացի թուրքերը, կ'աւարտի կառուցողական որոշումներու որդեգրումով։

ՄԱԿ-Ի 75-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՆԱԽԱԳԱՅ ԱՌԻՆ ԼԻՔԱՆԱՆԻ ԽՕՍՔԸ ԱՐՏԱՍԱՆԵՑ ԱՌՅԱՆՑ ՏԵՍԱԿՎՊՈՎ

ԱՌԻՆ. «ԿԱՌՉԱԾ ԿԸ ՄՆԱՔԻ ԼԻՔԱՆԱՆԻ ԾՈՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՒ ԱՆՈՒՑ ՄԷՋ ԳՏՈՒՈՂ ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ»



Հանրապետութեան նախագահ գործ. Միշել Աուս Երէկ Երեկոյեան շուրջ ժամը 8:00-ին առցանց տեսալարով արտասանեց Լիբանանի խօսքը՝ ՄԱԿ-ի 75-րդ ընդհանուր ժողովին ընթացքին։

Նախագահ Աուս շնորհակալութիւն յայտնեց ՄԱԿ-ին, աշխարհի երկիրներուն, ինչպէս նաեւ կառավարական եւ ոչ կառավարական կազմակերպութիւններուն Պէրլուօի եւ լիբանանցիներուն օժանդակութեան փութալովն համար՝ 4 օգոստոս 2020-ին Պէրլուօի նախագահի սկստապէս պայթումին պատճառով արեւելեան Երէկ։ Ան ընդգծեց, որ Լիբանանին ցուցաբերուած անմիջական օժանդակութիւններուն ազդեցութիւնը շատ դրական էր երկրին եւ լիբանանցիներուն համար։

«Մեր ժողովուրդը գագաց, որ առանձին չէ, քուած չէ, այլ այս աշխարհին մէջ մարդ եղբայրներ ունի, որոնք անվարան պատրաստ են իրեն օգնելու», ըսաւ ան։

Նախագահ Աուս անդրադարձաւ Լիբանանը հարձակոն տագնապներուն, ինչպէս նաեւ անոնց ունեցած ողբերգական հետեանքներուն, յատկապէս՝ վերջին պայթում-երկրաշարժը։

Ան ընդգծեց, որ Լիբանան կը փափաքի իմանալ պայթումին ճշմարտութիւնը, ինչպէս նաեւ կ'ուզէ արդարութիւն բանեցնել։

«Մենք տակալին կը սպասենք առեղծօրածային նաւու մասին հետաքննութիւններու սկսած միջազգային խմբակներուն տեղեկութիւններուն, ինչպէս նաեւ արբանեակային լուսանկարներուն, որոնք կը քողագործեն բոլոր ծալքերը եւ ահիջ կու տան հետաքննութեան յառաջընթացին, որուն կը հսկէ Լիբանանի Արդարութեան գերագոյն ատեանը», ըսաւ ան։

Նախագահ Աուս անդրադարձաւ սուրիացի տեղահանուածներու հարցին՝ ընդգծելով, որ Լիբանան այդ իրականութեան նկատմամբ առաւելագոյն մարդասիրական պիտրուեալներով ցուցաբերեց եւ յարգեց միջազգային օրէնքը։

Ան պահանջեց բազմապատկել այդ տեղահանուածներուն տունդարձը ապահովելու ջանքերը՝ առանց այդ քայլը պայմանաւորելու Սուրիոյ մէջ քաղաքական լուծման հաստատումով։

Նախագահ Աուս պահանջեց զօրակցիլ Լիբանանի կառավարութեան վաւերացուած սուրիացի տեղահանուածներու տունդարձի ծրագիրին գործադրութեան, ինչպէս նաեւ Լիբանանի օժանդակող երկիրներէ պահանջեց լիբանանեան հիւրընկալ ընկերութիւններուն խոստացած իր յանձնառութիւնները կատարել։

Նախագահ Աուս վերահաստատեց, որ Լիբանան կառուած կը մնայ Ապահովութեան խորհուրդի թիւ 1701 բանաձեւին եւ միջազգային ընտանիքէ կը պահանջէ ստիպել Իսրայէլին, որպէսզի իր պարտականութիւնները ստանձնէ եւ ինք եւս յարգէ այդ բանաձեւի գործադրութիւնը՝ վերջ տալով Լիբանանի վերեւ անոր օդուժին գործած թռիչքներուն եւ լիբանանեան գերիշխանութեան դէմ անոր օդուժին գործած ոսնձգութիւններուն։

«Միջազգային ընտանիքը պէտք է ստիպել Իսրայէլին, որ ան գործակցի ՖԻԽԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերուն հետ, եւ շարունակուի սահմանային Կապոյտ գիծը ճշդելու աշխատանքը։ Իսրայէլ պէտք է անմիջապէս հեռանայ Հիւսիսային Ղաժարէն, Մագարէի Ծեպայէն եւ Զֆառնուպայի բարձունքներէ։ Մենք կառչած կը մնանք Լիբանանի ծովային սահմաններուն եւ անոնց մէջ գտնուող հարցուտութեան՝ նաբթի ու կազին, եւ կ'ակնկալենք, որ ՄԱԿ-ն ու Լիբանանի բարեկամ երկիրները իրենց դերակատարութեամբ, յատկապէս՝ ամերիկեան միջնորդութեամբ, վերջնականապէս ամրապնդեն Լիբանանի իրաւունքները», ըսաւ նախագահ Աուս։

Ան հաստատեց, որ լիբանանցիները իրենց բոլոր շէրտերով կառչած կը մնան Մեծն Լիբանանին, միացեալ Լիբանանին՝ առանց որեւէ տեսակի բաժանումի կամ մասնատումի։

ՊԵՐՍՈՒԹԻ ՆԱԽՅԱՆԳԻՍԻ ՊԱՅԹՈՒՄԻՆ ՀԱՍԱՐ ՀԸՇՊԱԼԼԱՆ ԱՄԲԱՍԱՆԵԼՈՎ՝

«ՀԸՇՊԱԼԼԱՆ ԻՐ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՍԵԸ ԶԵՆՔԻ ՈՒԺՈՎ ԿԸ ՊԱՐՏԱԴՐԵ ԼԻՔԱՆԱՆԻՆ»
Կ'ԸՍԵ ՍԱԼՍԱՆ ԹԱԳԱՌՈՐ

Մեուտական Արաբիոյ Սալման պըն Ապտել Ազիզ թագաւորը ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 75-րդ նստաշրջանին ընթացքին արտասանած իր խօսքին մէջ յայտնեց. «Հըզպալլան իր քաղաքական կամքը գէնքի ուժով կը պարտադրէ Լիբանանին, եւ կողքին կը կանգնի լիբանանցի ժողովուրդին, որ մարդասիրական աղէտի ենթարկեցաւ»։

«Պէրլուօի նախագահի ստիպելով պայթումը տեղի ունեցաւ Լիբանանի մէջ որոշումի կայացման վրայ Հըզպալլայի գէնքի ուժով տիրութեան պատճառով, եւ անվտանգութեան, կայունութեան եւ բարօրութեան հաստատման համար պէտք է զայն զինաթափել», նշեց թագաւորը։

«Իրան հիլէական համաձայնագիրը շահագործեց՝ աշխուճացնելու համար իր ծաւալապաշտական գործունեութիւնը, հիմնելու համար իր ահաբեկչական ցանցը եւ բառսէն, ծայրայեղականութեան եւ համայնքայնութեան բացի ոչինչ արտադրելու համար», շեշտեց Մեուտական Արաբիոյ Սալման թագաւորը։



ԵՐՏՈՂԱՆ-ՄԱՔՐՈՆ ՀԵՌԱՁԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Էլիզեթ պալատը այտարարեց, թէ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն իր թուրք պաշտօնակից Ռեճեփ Թայիփ Էրտողանի հետ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին վերջնիկ կը ուղղած է՝ յարգելու Եւրոպայի գերիշխանութիւնն ու միջազգային օրէնքը, ինչպէս նաեւ աներկբայօրէն յանձնառու դառնալու Միջերկրական ծովուն մէջ մագըլ-ցողական քայլերը դադարեցնելուն։

Մաքրոն նախապէս ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովին առջեւ իր արտասանած խօսքին մէջ կը ուղղած էր «Թուրքիոյ հետ ազգու երկխօսութեան» արեւելեան Միջերկրականի մէջ տագնապէ խուսափելու համար»։ **Շար.ը՝ էջ 2**



ՓԵՆԹԱԿՈՆ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԻ ՄԷՋ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՊԱՆԵԼ

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Մարք Եսփըր Իսրայէլի ներքին գործոց նախարար Պէրլուօի Կանցի հետ Ուաշինկթընի մէջ իր հանդիպումին ընթացքին յայտարարեց, որ Միացեալ Նահանգներ պիտի պահպանեն Միջին Արեւելքի մէջ Իսրայէլի զինուորական առաւելութիւնը։

Իսրայէլ մտահոգ է Արաբական Միացեալ Եմիրութիւններու՝ ամերիկեան արդիական «ԷՃ-35» հալածիչներ գնելու կարելիութեամբ։

Եսփըր Փենթակոնի մէջ Կանցի առջեւ ըսաւ. «Մեր պաշտպանական յարաբերութիւններու հիմնական սիւներէն մէկը շրջանին մէջ իսրայէլեան տեսալարար առաւելութեան պահպանումն է»։ **Շար.ը՝ էջ 2**

ՊԵՐՍՈՒԹԻ ՆԱԽՅԱՆԳԻՍԻ ՊԱՅԹՈՒՄ՝ ՀՏԵՏԵԱՆՔՆԵՐՈՒ ԴԲՐՄԱՆՈՒՄԻ ԾԻՐԻՆ ՄԷՋ

ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՐԱԴԵՐՈՎ՝ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ ՅԱՐԳ ՈՐԳԵԳՐՈՒԱԾ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ



Պէրլուօի նախագահի ստիպելով 4 օգոստոսի ահաւոր պայթումի հետեանքներու դարմանումի քայլերուն ծիրին մէջ, երէկ՝ չորեքշաբթի, 23 սեպտեմբեր 2020-ի կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, Պուրն Համուտի քաղաքապետութեան իրաւերով ընդլայնուած հանդիպում մը կայացաւ Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ՝ ներկայութեամբ պետական, զինուորական, ընկերային, տեղական թէ միջազգային կազմակերպութեանց եւ մամուլի ներկայացուցիչներու։

ՀԱՐՅԵՐՈՒ ԼԱՅՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ ՀԱՆԳԻՊՈՒՄ ՀՅԳ-Ի ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՌՈՒՄԻՈՅ ԳԵՄՊԱՆԻՆ ՄԻՋԵՒ

ՀՅԳ Հանրային կապերու գրասենեակը կը տեղեկացնէ, որ 22 սեպտեմբերին Ռուսիոյ դեսպանատան մէջ ՀՅԳ Բիւրոյի նախագահ Արմէն Ռոստամեան եւ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան հանդիպում ունեցած են Հայաստանի մէջ Ռուսիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան Սերկէյ Քոնիքոնի հետ։

Հանդիպումի ընթացքին միտքեր փոխանակուած են հայ-ռուսական յարաբերութիւններու, Հայաստանի ներքաղաքական գարգացումներու, Հայաստանի եւ Արցախի շուրջ ծաւալուող գործընթացներու, ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներու միջնորդական առաքելութեան, Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններու եւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող բազմաթիւ այլ հարցերու վերաբերեալ։

ՆԱԽԱՐԱՐ ՄԵՃԱԿԱՆԵԱՆ «ԹՈՒՐԲՈՑ ԿՈՂՄԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ՇՐՋԱՓՎԱԿՈՒՄԸ Կ'ՈՏԵԱԿԱՐԵ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐՆԵՐԸ»

Երեք տասնամեակ շարունակ Թուրքիան կը մերժէ Հայաստանի՝ դէպի ծով ելք ունենալու իրաւունքը՝ փակելով ցամաքային սահմանը։ Այս միջնադարեան շրջափակումը չի կրնար արդարացուիլ բանակախօսութեան կամ այլ միջազգային իրաւունքի տեսանկիւնէ, քանի որ անհիկա ուղղակիօրէն կ'ոտնահարէ ո՛չ միայն **Շար.ը՝ էջ 3**

ՉԱԽԱՐԱՐԱՆ ԿՈՉ Կ'ՈՒՂԱԸ ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՌՈՒՄԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ, ՈՉ՝ ԱՁՐՊԵՅՏԱՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովա կը ուղղեց՝ հիմք ընդունելու Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական պաշտօնակցներու յայտարարութիւնը, ոչ թէ ազդեցունական լրատուական կայքերու մեկնաբանութիւնը։ **Շար.ը՝ էջ 4**

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ Կ'ԱՅՅԵԼԵ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՐԲԵՐՈՒ «ԱՐԱՄ ՊԵՋԻՔԵԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆ



Տարուան ընթացքին, վեհափառ հայրապետը յաճախակի առիթներով կ'այցելէ Հայոց ցեղասպանութեան օրերու «Արամ Պէլքիբեան» թանգարանը եւ մօտէն կը հետաքրքրուի թանգարանին աշխատանքով։ **Շար.ը՝ 4**

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՀՈՒՆՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԳՉԳՈՒՄԻ ԵՒ ԱՐԳԵԼԱԿՈՒՄԻ ԵՆԹԱԿԱՅ

Կառավարության կազմության հոլովոյթը մինչև երկ ուշ գիշեր մնաց ճգճգուժի եւ արգելակուժի ենթակա:

Երկ կեսօրը քննարկելով Սուրաբա Կառնի Կառավարության քննարկները և կազմելու բոլոր լիքանս-ցիները գոհացող առաջնություն կառավարությունը, որ պիտի գործարդ ֆրանսական նախաձեռնությունը, այլ խօսքով՝ տնտեսական եւ ելունկայանային բարեկարգումները, որոնք գործարկության շուրջ լիքանսնեան թաղաքական բոլոր ուժերը համաձայնեցան:

Հարոգագրության մեջ նշուեցաւ, որ Կառնի այսքան ատեն լուր մնացած է՝ գիտակցելով իր ստանձնած մեծ պատասխանատուության, ինչպէս նաեւ սահմանադրության շրջագիծին մէջ հանրապետության նախագահին հետ խորհրդակցաբար կառավարութիւնը կազմելու անհրաժեշտութեան:

Վարչապետը, որ յանձնառու կը մնայ ատակ անձնաւորութիւններէ եւ մասնագէտներէ կառավարութիւնը կազմելու իր սկզբունքներուն, որպէսզի նախարարաց խորհուրդը արժանանայ արարական եւ միջազգային հասարակութիւններու վճարատուութեան:

Վարչապետը, որ այդ վստահութիւնը կարելի է, որպէսզի կարելի ըլլայ Լիքանսնեան արտաքին օժանդակութիւններ ապահովելով՝ անոր տնտեսութիւնը փրկել:

Ան յոյս յայտնեց, որ բոլորը կը գործազգի Լիքանսնի եւ լիքանսնեան զերգուցի շահերը ապահովելու եւ հայրենիքը փրկելու համար:

Վարչապետը, որ իրապարակութեան մը հրապարակուեցաւ նախագահական պալատէն: Պապատայի հարոգագրութիւնը կը նշէր, թէ սահմանադրութեան 53-րդ եւ 64-րդ յօդուածներուն համաձայն, հանրապետութեան նախագահը վարչապետին հետ համաձայնաբար կը հրապարակէ կառավարութեան կազմութեան հրամանագիրը:

ԱՅՆ ԹԻՆԵՒ ՄԷՋ «ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՕՐԵՆՔԸ ԸՆԴՊԻՐԿՈՒԱԾ Ե ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԼԻՔՈՒՄԱՐ ՆԻՍՏԻՆ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՄԷՋ»

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի երկ Այն Թիւնի մէջ նախագահեց խորհրդարանի ղեկավարութիւնը, որուն ներկայ գտնուեցան խորհրդարանի փոխնախագահ Էլի Ֆըրզի, ՀՀ Լիքանսնի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, ինչպէս նաեւ երեսփոխաններ Ալեւ Աուս, Սամիր Ժըր, Միշէլ Սուսա, խորհրդարանի ղեկավար Եւրոպայի Անտան Տաքեր, ինչպէս նաեւ խորհրդարանի միացեալ վարչութեան ղեկավար տնօրէն Սոհալա Մուսա:



Սոհալա Մուսան խորհրդարանի փոխնախագահ Էլի Ֆըրզի յայտնեց, որ ճշգրտած են չորրեքշաբթի, 30 սեպտեմբերի եւ հինգշաբթի, 1 հոկտեմբերի խորհրդարանի լիցուցումը նիստին ընթացքին քննարկուելիք օրինագիծերուն օրակարգը, յատկապէս նկատի ունենալով կրկնակ աճապարանք օրինագիծերը, որոնք կը վերաբերին Պէյրութի նախագահութիւնի պայտուակի հետեւանքները մեղմացնելու իմաստով որդեգրուելիք կարգ մը քայլերու: Անդրադառնալով համաներման օրէնքին՝ Ֆըրզի յայտնեց, որ անկախ ընդգրկուած է խորհրդարանի քննարկելիք օրակարգին մէջ:

ԼԻՔԱՆՍՆԻ ՄԷՋ «ԶՈՐՈՒՆԱ» ԺԱՅՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԾՆԵՐՈՒՆ ԹԻՒՔ ՀԱՍԱԾ 31.778-Ի, ԻՍԿ ՄԱՅՐՈՒՆ ՊԱՐԱԿԱՆԵՐՈՒՆ՝ 328-Ի

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երէկ Լիքանսնի մէջ «Զորուն» ժառանգով վարակուածներուն թիւը հասաւ 31.778-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 940 նոր վարակուածներ, որոնցմէ 923-ը՝ տեղացիներ, իսկ 17-ը՝ Լիքանսն վերադարձած քաղաքացիներ:



Ներքին շրջագրեցին այդ յանձնարարականը, իսկ ելունկայան սուր ընդունապարզ տնտեսական մարզը ընդդիմացաւ այդ առաջարկին: Միւս կողմէ, ապահովական ուժերը մտավարկութիւն յայտնեցին, որ արդէն իսկ տնտեսական ու ընկերային տագնապի ճնշումէ տառապող ժողովուրդը կրնայ յանձնառու չլինի նման որոշումի մը, ինչպէս էր պարագան վերջին ընդհանուր գորաշարժի ընթացքին», հաստատեց Ապիտո:

ԼԻՔԱՆՍՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

- ՄԱՐՈՒՆԻ համայնքի Պարա Ռայի պատրիարքը երկ Տիմանի մէջ ընդունեց ՀՀ Լիքանսնի կառավարութեան կողմէ մեկ պատուիրակութիւնը, որ գորակութիւն յայտնեց անոր յայտարարած չեղարկութեան կեցուածքին եւ դատապարտեց Ռայի պատրիարքին դէմ մղուած արշաւը:
- ԵԼԵՒՄՈՒՏԵՒԻ նախարարի պաշտօնակատար Ղազի Ուազի երէկ ընդունեց աշխատանքի նախարարի պաշտօնակատար Լամիա Եամմինը, որուն հետ ընկարկեց Ընկերային ապահովագրութեան ստուակի հատուցումները յանձնելու կարելիութիւնները: Ուազի շեշտեց ընկերային ապահովութեան կառավարչութեան անհրաժեշտութիւնը՝ խոստանալով Ընկերային ապահովագրութեան ստուակի անկախութեան հատուցումները կատարել եւ անոնց շահերը պաշտպանել:
- ԵՐՈՒՄՈՒՏԵՒԻ հանդիպում պլոքի երեսփոխան Նաամ Թոմմէ յայտնեց, որ Ընկերվար յառաջիկան կուսակցութեան ղեկավար Ուազի Եամմինը հակառակորդներուն կամ դաշնակիցներուն գոհ պահելով չէ գործադրած, որովհետեւ անոր համար Լիքանսնի հայրենիքին շահերը ամեն բանէ վեր են:
- ՀԶՐՈՒ Լիքանսնի համախմբումի երեսփոխան Ասատ Տըրդամ յայտնեց, որ իրենք կ'որոշուեն որեւէ նախաձեռնութիւն, որուն իմաստ վրայ կարելի կ'ըլլայ դիւրացնել կառավարութեան ծնունդը:
- ԱԶՄՏԱԳՐՈՒՄ եւ բարգաւաճում պլոքի երեսփոխան Ալի Կրէյս ընդգծեց, որ իրենք կը գորակցին «Պարտականութեան» կառավարութեան կազմութեան, սակայն կը մերժեն գիւրջը ջնջելու փորձերը:
- ԵՐՈՒՄՈՒՏԵՒԻ հանդիպում պլոքի երեսփոխան Պիլայ Ապտալ յայտնեց, որ ինք խորհրդարան ներկայացուցած է օրինագիծ մը, որուն համաձայն, բանարկութիւնը ամբողջացուցած յանցագործներուն տուրքերը կը ջնջուի:
- ՀԶՐՈՒ հանրապետութիւնի պլոքի անդամ, երեսփոխան Շոթ Օբէյս յայտնեց, որ շին երկեակին կողմէ ելունկայան նախարարութեան կառուցածութիւնը կ'արգելալէ բարեկարգումը, ինչպէս նաեւ կը հարուածէ իսլամօրինակ հասարակութիւնը:
- ՄՈՒՄՈՒՏԵՒԻ հոսանքի Աքքարի պատասխանատու հայտնեց Թիմա յայտնեց, որ նախկին վարչապետ Սաստ Հարիրիի առաջարկած փրկութեան նախաձեռնութիւնը հայրենիքի բարիքին համար է եւ ոչ թէ կուսակցութիւններուն կամ համայնքներուն:

ԱՆԱՐԻ ՎԵՐԵՊՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ ԸՆՈՐՀԱԿԱՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԷ ՏՈՒՄ ԱՇԽԱՏԱՆԱԿԱՆ ԳԵՐՊՈՒՄԻՆԻ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարի պաշտօնակատար Վարդիս Օհանես-Գեորգեան երէկ նախարարութեան մէջ ընդունեց Անարի վերելիքներու միութեան մէկ պատուիրակութիւնը, որ որոշուեց է շնորհակալութիւն յայտնեց նախարարին՝ Լիքանսնի ֆուլպուրի զոհուած աստղ Սոհալա Արիւսի ծնողին գորակցելու առիթով:

Միութեան նախագահ Հիտա Ֆահիամ պատուիրակութեան անունով շնորհակալութիւն յայտնեց Վ. Օհանես-Գեորգեանին՝ Սոհալա Արիւսի հայրենիքի նախաձեռնութեան եւ հերոսներէ մէկը նկատելու իր շահվիրայի դերակատարութեան համար:

Ֆահիամ նշեց, որ ատիկա իրաւունք է բոլոր անոնց, որոնք կրկ փամբուելով կը սպասուին: Ան շնորհակալութիւն յայտնեց նախարարութեան, որ միշտ հետեւեցաւ Արիւսի առողջական վիճակին, երբ ան հիւանդանոց կը գտնուէր, եւ ապա նախարարը այցելեց Հարուսի՝ ցաւակցութիւն յայտնելու համար անոր մահուան առիթով:

Միութիւնը Վ. Օհանես-Գեորգեանին ներկայացուց շարք մը առաջարկներ, որոնք կը միտին իւրաքանչիւր մարզիկի ծառայել, ինչպէս նաեւ ծառայել բոլոր անոնց, որոնք իրենց ներդրումը կ'ունենան լիքանսնեան ֆուլպուրի զարգացման մէջ:

Ֆահիամ յայտնեց, որ իւրաքանչիւր լիքանսնի մարզիկ գորակցութեան կարիքը ունի, յատկապէս ներկայիս տիրող պայմաններուն լոյսին տակ:

ՎԱՆԵԼԱՆԻԹ ԶՈՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՆՔՈՒՄՈՐ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՐԵՏ ՊԻՏԻ ՊԱՏՃԱՒԵ»

Ուժանիւթի եւ շուրի հարցերու նախարարութեան երէկ հրապարակած վառելանիւթի սակագոյցին համաձայն, 98 եւ 95 օքթան պենզինի թիթեղին սակը 100 Լ. ոսկիով նուազած է, տիզոլը՝ 400 Լ. ոսկիով, իսկ կազմ՝ 300 Լ. ոսկիով:

Միւս կողմէ, վառելանիւթ բաժնու ընկերութիւններու ներկայացուցիչ Ֆատի Ապու Շաքա յայտնեց, որ պենզինի տագնապ գոյութիւն չունի, այլ պենզինի սակաւութիւն՝ Կեդրոնական դրամատան կողմէ գումարներ չտրամադրելու պատճառով: Ապու Շաքան հաստատեց, որ պտուութեան կողմէ տրուած բոլոր որոշումները սխալ են եւ կը միտին ժողովուրդին ուշադրութիւնը շեղել: «Վառելանիւթ գորակցութիւնը կասեցնելու առումով որեւէ որոշում՝ երկրին մէջ ընկերային աղէտ պիտի պատճառէ: Թո՛ղ ամերիկեան տոլար ապահովուի եւ պենզինը կարմիր գիծի վերածուի», հաստատեց Ապու Շաքա:

ԷՐՏՈՂԱՆ-ՄԱՔՐՈՆ...

Շարունակուած Ա. Էշէն

Թուրքիոյ պետական «Անատուլու» լրատու գործակալութիւնը իր կարգին՝ յոյժ կատարելով Թուրքիոյ նախագահի հասարակութեան հետ կապերու վարչութեան, հարգողեց, որ Թուրքիոյ նախագահը հետաձայնակին հարգողակցութեան ընթացքին շեշտած է. «Արեւելեան Միջերկրկանի մէջ տիրող լարածութեան պատճառով Թուրքիոյ եւ Կիպրոսի թուրքերու օրինական իրաւունքներուն խախտումն է»:

Ան Մաքրոնի յայտնած է, թէ Անգարա Փարիզէ կ'ակնկալէ Անգարայի եւ Յունաստանի միջեւ տարակարծութեան մէջ «շինիչ» գործելու մը ունենալ: «Զարմանալի է Ֆրանսայի աջակցութիւնը Յունաստանի եւ Կիպրոսի յոյներու առաւելապաշտական ապահովութեան ու քայլերուն, որոնք կը նպաստեն լարուածութեան աճին», ըսած է ան:

Երտուղան Նոյն ատեն նշած է, որ կարելոր կը նկատուէր Թուրքիոյ Միջերկրկանի մէջ լարուածութիւնը նուազեցնելու համար դիւանագիտական բոլոր միջոցներուն օգտագործումը:

Թուրքիոյ նախագահը յայտարարած է, որ Անգարա Ֆրանսայէ կ'ակնկալէ հոլովոյթին նկատմամբ խոհեմ եւ կառուցողական վերաբերմունք: Ան նաեւ նշած է Թուրքիոյ եւ Ֆրանսայի միջեւ խորհրդակցութիւններու եւ հարցալուրջութիւններու մեքա-նիզմի կայուն օգտագործման կարելիութիւնը:

ՕԹԱՆ. «ԹՈՒՐԷԿԻ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ ԹԵՐԵՆԻԷ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԼԱՎ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ»



ՕԹԱՆ-ի ընդհանուր քարտուղար Եսա Սթոլթենս-պերկ յայտարարեց. «Թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ արեւելեան Միջերկրականի շուրջ թեքնիք բանակցութիւնները լաւ յառաջդիմութիւն արձանագրեցին»:

Ան նշեց, թէ երկու կողմերուն միջեւ Միջերկրական ծովուն մէջ տիրող տագնապը լուծելու համար թեքնիք բանակցութիւնները պիտի շարունակուին, «եւ միջեւ այսօր շարք մը ժողովներ գումարուեցան, եւ անոնց մէջ լաւ յառաջդիմութիւն արձանագրուեցաւ»:

«Թեքնիք բանակցութիւնները զինուորական թեքնիք բանակցութիւններ են, եւ երկու կողմերուն միջեւ տարակարծութիւնները լուծելու գերմանական դիւանագիտական ջանքերը ամբողջացումն են թուրք-յունական հանդիպումներուն, որովհետեւ Գերմանիոյ ջանքերը յանգեցան Թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ նախնական բանակցութիւնները դարձեալ սկսելու համաձայնութեան», ըսաւ Սթոլթենսը՝ այդ առնչութեամբ իր երախտապարտութիւնը արտայայտելով:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ...

Շարունակուած Ա. էջէն

Ներով: 23 սեպտեմբեր 2020-ի առաւօտուն, վեհափառ հայրապետը դարձեալ այցելեց, շրջեցաւ թանգարանի բաժանմունքները եւ զոհուականութեամբ իմացաւ, որ հակառակ համաճարակին ստեղծած դժուար պայմաններուն, թանգարանը կը շարունակէ հայ թէ՛ օտար այցելուներ ունենալ:

Վեհափառ հայրապետը շնչոտեց խնամակալութեան գործունեութեան վերաշխուհացման հրամայականը: Այս առիթով, վեհափառ հայրապետը թանգարանի յուշամատենին մէջ արձանագրեց. «Այն հայը, որ կ'այցելէ այս թանգարանը արցունքոտ աչքերով՝ սակայն իր պահանջատիրական կամքը վերականգնած դուրս կու գայ: Իսկ օտարը, որ կ'այցելէ՝ իր գորակցութիւնը կը յայտնէ հայ ժողովուրդի արդար դատին»:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Յաղթահարելու համար Պեյրոպի նաւահանգիստի պայթումին պատճառով մեր հայրենակիցներուն մօտ ստեղծուած հոգեբանական լուրջ դժուարութիւններն ու խնդիրները, գործակցաբար Լիբանանահայութեան վերականգնումի մարմինին, Ազգային առաջնորդարանի ԸՆԿԵՐԱՅԻՆ ծառայութեան բաժանմունքը կը կազմակերպէ հոգեբանական հոգատարութեան աշխատանք մը, որ պիտի սկսի շաբաթ, 26 սեպտեմբեր 2020-ին, ԸՆԿԵՐԱՅԻՆ ծառայութեան բաժանմունքի կեդրոնին մէջ (Նախկին Բառասնից Մանկանց վարժարանի շէնքին մէջ):

Ծրագիրը, որ պիտի իրագործուի մասնագետ հոգեբան-հոգեբուներու եւ հոգեւորականներու մասնակցութեամբ, նկատի առնուած է առաւելաբար պայթումին զոհուած հայրենակիցներու ընտանեկան պարագաներուն ու պայթումին պատճառով ցնցումներու ենթարկուած անհատներու եւ Լիբանանի մէջ տիրող ընկերային ու տնտեսական կայունութեան պատճառով հոգեբանական կամ հոգեւոր խորհրդատուութեան ու հոգատարութեան կարիքը ունեցողներու համար: Աշխատանքը պիտի կատարուի կարիքի համաձայն, անհատական կամ խմբային հանդիպումներով:

Ուստի, դժուարութիւններու մատուած մեր հայրենակիցներուն կը յանձնարարենք, որ մասնակցութեանց եւ յաւելեալ տեղեկութիւններու համար, առաւօտեան ժամը 8:00-էն մինչեւ յետմիջօրէի ժամը 4:30, հեռաձայնի 01-261117 թիւով կապուին բաժանմունքի պատասխանատուին հետ եւ ստանան անհրաժեշտ ցուցմունքներ:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՆԸ

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶՅԱՅԻՆ ԹԻԻԵՐԸ «ԱԶԳԱԿ»-Ի ԻՆՏԵՐՆԵՏԻ ՎԵՅՄԱՆԱԿԻ ԿԵՆՏՐԻՆ ԻՆՏԵՐՆԵՏԻ ԿԵՆՏՐԻՆ (01)258526, (01)260115 ԵՒ (01)241274:

ՄԱԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 75-ՐԴ ՆԻՍՏԻ ԸՆԹԱՅԵԻՆ ԷՐՏՈՂԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ ԶՆՉԵՑՈՒՅԱԾ Ե ԻՍՐԱՅԵԼԻ ԶԱՍՑԵԻՆ. ԻՍՐԱՅԵԼԻ ԴԵՍՊՈՒՆԸ ԼՔԱԾ Ե ԴԱՅԼԻՃԸ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի ընթացքին իր արտասանած խօսքին ընթացքին դատապարտած է Արաբական Միացեալ Էմիրութիւններն ու Պահրէյնը Իսրայէլի հետ համաձայնագիրներ ստորագրելու համար՝ գանոնը «համագործակիցներ» կոչելով: Այս մասին կը հաղորդէ իսրայէլեան «Ճերուզալէմ Փոսթ» օրաթերթը:



Ան մասնատրաբար նշած է. «Կեղտոտ ձեռքը, որ կը համարձակի դպակ էրուսաղէմի պարկէշտութեան, ուր երեք հիմնական կրօններ կ'ապրին, գերազանցած է վտիտութիւնը»:

Էրտողան Իսրայէլը մեղադրած է «համագործակիցներու միջոցով ամրոցը ներսէն գրաւելու փորձի մէջ»:

Թուրքիոյ նախագահի խօսքին ընթացքին ՄԱԿ-ի մէջ Իսրայէլի դեսպան Կիւրտ Էրտան լքած է դահլիճը: Ան Էրտողանը մեղադրած է հակասեմականութեան յանցանքով՝ յայտարարելով, որ Թուրքիոյ նախագահը «կը շարունակէ իր սուտերն ու հակասեմական յայտարարութիւնները Իսրայէլի դէմ, եւ կարեւոր է, որ աշխարհը իմանայ

այն երկակի չափանիշները, որոնցմով ան կ'ապրի»:

Թրքական «Յիւրիիթ» օրաթերթը կը հաղորդէ, որ Թուրքիոյ նախագահը իր խօսքին մէջ նշած է, թէ «Թուրքիան պիտի չաջակցի պաղեստինցիներու շահերը ունահարող որեւէ ծրագրի», «անձնատուութեան արարք» կոչած է Միացեալ Նահանգներու նախագահ Տանըտ Ռաբանի մշակած «Դարու գործարք» անունով իսրայէլաւետ պայմանագիրը եւ նշած, որ պաղեստինեան հարցը կրնայ լուծուի միայն Արեւելեան Երուսաղէմ մայրաքաղաքով անկախ Պաղեստինի պետութեան ստեղծումով՝ 1967 թուականին գոյութիւն ունեցած սահմաններուն համաձայն:

ՉԱՆԱՐՈՎԱՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՎԷ ՀԻՄԷ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ...

Շարունակուած Ա. էջէն

Ըստ «Արմէնփրես»-ին, ազդեցիկ նախնական լրատուական կայքերը տեղեկութիւն տարածած էին այն մասին՝ իբրեւ թէ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրովը Մոսկուայի մէջ Ազրայէյանի խորհրդարանի նախագահ Ս. Կաֆարովայի զխաւորած պատուիրակութեան հետ հանդիպման ընթացքին յայտարարած է, որ «Ռուսիան կողմ արտայայտուած է արցախուստի 5 շրջաններու՝ Ազրայէյանի վերադարձին», եւ որ «Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի դիրքորոշումը՝ դարաբարեան տագնապին վերաբերեալ, կը խոչընդոտէ խաղաղ գործընթացի լուծումը»:

Ցատկանշական է, որ ո'չ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան տարածած հաղորդագրութեան եւ ո'չ ալ հանդիպման տեսանկիւնի մէջ նման որեւէ միտք կայ, տեղեկատուութեան միակ աղբիւրը՝ ազրայէյանական պետական քարոզչութեան սպա-

սարկող լրատուական կայքերն են:

Շաբաթական իրադարձութեան անդրադարձաւ նաեւ Մարիա Չախարովան՝ յայտնելով, որ հանդիպման ընթացքին քննարկուած են դարաբարեան տագնապի խաղաղ լուծման հարցերը: Նախարար Լաւրովի կողմէ չէ կատարուած նախապէս չբարձրաձայնուած որեւէ տրոյտարարութիւն:

«Լեւոնային Ղարաբաղի տագնապի լուծման հարցին մէջ Ռուսիոյ դիրքորոշումը բոլորը շատ լաւ գիտեն, եւ կը խնդրեն առաջնորդուիլ ինքնին այդ դիրքորոշումով, եւ ո'չ թէ տարբեր մեկնաբանութիւններով, զորս կը կատարեն ոչ ռուսական կողմը», եզրափակած է Չախարովա:

Վերահաստատելով, որ պետք է միայն Ռուսիոյ պաշտօնական յայտարարութեան հետեւիլ՝ Չախարովա նշած է, որ պաշտօնական լրատուութեան մէջ 5 շրջաններու վերադարձին մասին որեւէ միտք առկայ չէ:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՔՈՐԷԱ ՄԱԿ-ԷՆ ԽՆԴՐԱԾ ԵՒ ՕԳՆԵԼ ՀԻՄՆԱՅԻՆ ՔՈՐԷԱՅԻ ՀԵՏ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ԿՆՔՄԱՆ ՀԱՐՑԻՆ ՄԵՋ



Հարաւային Զորեան ՄԱԿ-էն խնդրած է աջակցիլ Յիւսիսային Զորեայի հետ պատերազմի դարձեցման մասին հռչակագրի կնքման հարցին մէջ: «Պլումպըրկ» կը հաղորդէ, որ այս մասին ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 75-րդ նստաշրջանին ընթացքին իր արտասանած խօսքին մէջ յայտարարած է Հարաւային Զորեայի նախագահ Մուն Չժէ Ին:

Ան յիշեցուցած է, որ 2020 թուականին ամբողջացած է Զորեական պատերազմի 70-ամեակը:

«Պատերազմը պետք է աւարտի, ամբողջովին եւ առաւել: Ես յոյս ունիմ, որ ՄԱԿ-ն ու միջազգային ընտանիքը պիտի աջակցին, որպէսզի պատերազմի աւարտի հռչակագրին միջոցով քայլ կատարենք դէպի հաշտեցման եւ բարգաւաճման դարաշրջան», ըսած է Հարաւային Զորեայի նախագահը:

Մուն Չժէ Ին նաեւ յայտնած է, որ այդ քայլը «ճաւայ պիտի բանալ լիակատար ապահովեականացման եւ Զորեական թերակզգիին վրայ մնայուն խաղաղութեան հաստատման համար»:

Յիշեցնելը, որ Զորեական պատերազմը սկսած է 25 յուլիս 1950-ին: Պատերազմի պատճառով ժամանակին միացեալ երկիրը բաժնուած է երկու մասի՝ Յիւսիսային եւ Հարաւային Զորեաներու: Պատերազմը աւարտած է 1953-ին, սակայն երկու պետութիւնները կը շարունակեն թեքնիքապէս պատերազմի մէջ մնալ:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՔԱՂԻ ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՏԱՆ. Տէր եւ տիկին Գրիգոր Շուշունեան իրենց հարազատներուն յիշատակին կը ստանձնեն օրուան մը ճաշի ծախսը՝ 750.000 լիբանանեան ոսկիով:

ՃՈՎ ԶԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԱՅՅՈՒԹԵԱՆ. Advertisement for relief services in Lebanon.

AFHIL ARMENIAN MUTUAL FUND. 20 Years of Commitment. Advertisement for insurance and financial services.

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԱՆԱՉԻԿԱՅ ԵՐԵՎ ԿԹՎԱՆ ՏԱՐԵՐՁԱՆՆԵՐՈՒ ՄԱՋԵԼԻ ՈՒ ՈՐԱԿԵԱԼ ՈՒՍՄԱՆ ՆԱԽԱՉԵՆՆՈՒԹԻՒՆ. Advertisement for the Armenian Catholic Archdiocese of Yerevan.

«ԱԶԳԱԿ»-Ի ԱՐԱՐԵՐԻՆ ԿԱՅՔԷՉԸ www.aztagarabic.com. Advertisement for the Aztagarabic website.